№ 194 ՇԱԲԱԹ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 6 1903 ՇԱԲԱԹ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 6 № 194

ԵՐԵՍՈՒՆՄԷԿԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 րուբլի. կէս տարվանը 6 րուբ. Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, Редакція «Мшакъ» կամ Tiflis, Rédaction «Mschak». Տելեֆօն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ (բացի կիրակի եւ տօն օրերից).

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարւում են իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ. Տելեֆօն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Հայկական երգ և երաժշտութիւն.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ Նուխուց. Նամակ Խմբագրութեան. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Ջինադադարը զարթնում է. Ինչ է կատարվում Մակեդոնիայում. Նամակ Պարսկաստանից. Արտաքին լուրեր.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.— ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Ղրիմի ափերից.

ՀԱՅԿԱԿԱՆ ԵՐԳ ԵՒ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ

«Մշակի» երեկվայ համարից մեր ընթերցողները տեղեկացան, որ այս ամսի վերջին Բեռլինում պէտք է տեղի ունենայ միջազգային երաժշտական համաժողով, որի քննութեան առարկաների մէջ պէտք է լինի և Կովկասեան երաժշտութիւնը, որի մէջ մտնում է և հայկականը։ Կովկասեան երաժշտութեան մասին զեկուցանողը, Վ. Կորգանով, հմուտ է երաժշտական գործի մէջ և մասամբ զբաղվել է հայկական երաժշտութեամբ, բայց նրա առաջ դրված է մի մեծ դժուարութիւն, այդ այն է, որ ընդհանրապէս մեր երաժշտութիւնը դեռ չէ ուսումնասիրված և նրա մասին հիմնաւոր կարծիքներ յայտնելու համար բաւականաչափ նիւթ չէ ամբարված։

Հայկական երգը և երաժշտութիւնը արդիւնք են բազմատեսակ ազդեցութիւնների։ Հին ժողովրդական եղանակները խառնվել են եկեղեցական եղանակների հետ, նրանց վրա աւելացել են տաղեր և մեղեդիները, որոնք ստեղծվել են շարունակաբար, թէ հին երգեցողութեան և թէ շրջապատող պարսիկ, արաբ, քիւրդ, կովկասեան ուրիշ ազգերի և եկւոր ցեղերի երգեցողութեան ազդեցութեան տակ, իսկ վերջին ժամանակներս հանդէս են եկել եւրոպական երաժշտութեան արձագանքները մեծ և փոքր չափով և ազդել նորագոյն երգերի և երաժշտութեան վրա։

Որպէս զի կարելի լինի ճիշդ գաղափար կազմել հայկական երաժշտութեան բնորոշ տարրերի մասին, անհրաժեշտ է, որ մի կողմից արձանագրված լինեն թէ հայկական և թէ շրջապատող ազգերի երաժշտութեան նմուշները, իսկ միւս կողմից ուսումնասիրվեն այն շրջանները, որոնցով անցել է հայկական երաժշտութիւնը ժամանակների ընթացքում։ Պէտք է նկատել, որ եղանակները շատ արագ անցնում են ազգից ազգ, երկրից երկիր և դառնում մեծ տարածութեան վրա ապրող ժողովուրդների սեփականութիւն։ Կովկասում, օրինակ, մենք ականատես ենք ամեն օր, ինչպէս մի ազգի մէջ երևեցած եղանակը շուտով անցնում է հարևան ազգերի մէջ և պատուաստվում այնտեղ։ Անկասկած, ամեն մի ազգագրական բնորոշ տարր մտցնում է եղանակի մէջ որոշ գունաւորութիւն և արտայայտութիւն, դարձնելով նրան տեղային և ցեղային, բայց և այնպէս օտար եղանակը ոտք է կոխում նոր հողի վրա և խառնվելով տեղականի հետ առաջացնում է մի բարդութիւն, որի տարրալուծելը արդէն դառնում է մի դժուար խնդիր ուսումնասիրողի և քննողի համար։

Համակրելով այն մտքին, որ եւրոպական միջազգային մի կոնգրէսում խօսք է բացվում կովկասեան և մասնաւորապէս հայկական երաժշտութեան մասին, մենք շատ կը ցանկանայինք, որ կատարվէին լուրջ ուսումնասիրութիւններ այդ ասպարէզում և ամբարվէր այնքան նիւթ, որ հնարաւոր լինէր ծանրակշիռ և փաստերի եզրակացութիւններ անել հայկական երգի և երաժշտութեան մասին գոնէ մերձակայ տարիներում։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՆՈՒԽՈՒՑ

Օգոստոսի 28-ին

Նուխուց դէպի հիւսիս, 5 վերստ հեռաւորութեան վրա, կովկասեան սարերից մէկի փէշում գտնվում է Բիչ կոչված թուրքաբնակ գիւղը, որտեղ և հայերն ունեն մի ուխտատեղի ս. Եղիչէ Առաքեալ անունով։ Գիւղը գտնվելով բարձր սարի վրա, ունենալով զով ջրեր և մաքուր օդ, ծառայում է որպէս ամարանոց նուխեցիների համար։ Բիչ գիւղը բաժանվում է քաղաքից Բիչ-չայ կոչվող գետով. գետը իր սկիզբն է առնում կովկասեան սարերից և գընում միանում է Աղջի կոչված գետին և այնուհետեւ թափվում Կուրի մէջ.

Հէնց որ ամառը կանգնում է, այսինքն մայիս ամսից, նուխեցիները մտաբերում են ս. Եղիչէ Առաքեալը և խումբ-խումբ սկսում են բարձրանալ այդ հզօր ուխտատեղին, քաւելով իրանց ամբողջ ձմեռվայ մեղքերը։ Ոմանք վերցնելով իրանց ընտանիքը, գնում են այնպէս առած տեղային բարբառով «համ զիարաթ համ խէյրաթ», այսինքն թէ ուխտ անելու և թէ ամառը ամարանոցում ապրելու՝ կորցրած ույժերը վերականգնելու, իսկ ոմանք, մի քանի ընտանիքներ միանալով, միասին գնում, ուխտ են անում և մնում են մի քանի շաբաթ ամառվայ տաք օրերից թեթևանալու, ունենալով իրանց հետ հազար ու մի վարակիչ հիւանդութիւններ։ Իսկ երիտասարդները, վերցնելով իրանց հետ գինի, թառ, զուռնայ, կազմելով խմբեր, ճանապարհ են ընկնում դէպի Եղիչէ Առաքեալի վանքը, քէֆ անելու, մի խօսքով մայիսի 1-ից մինչև սեպտեմբերի վերջը։ Երբ մտնէք դուք վերոյիշեալ վանքը, բակի դռնով մտնելիս առաջին քայլափոխում կը հանդիպէք տասնեակ կառքերի ու սայլերի, ձիերի ջոկեր. մի փոքր առաջ գնալով, կը տեսնէք նստած երիտասարդների խմբեր, որոնք պարում, երգում, ուրախանում են, իսկ մի ուրիշ խումբ արդէն սկսել է բղաւոց, հայհոյանք և խանգարում է միւսներին։ Այնտեղ գալիս են և թոքախտաւորներ ու տեսակ տեսակ հիւանդներ։ Նայելով հիւանդներին, իսկոյն և եթ կը նկատէք, որ այդ հիւանդները իրանց հիւանդութիւնը ստացել են օտար քաղաքներում և փոխանակ դիմելու բժշկի օգնութեան՝ հիւանդութեան առաջն առնելու համար, նրանք չուել են հայրենիք, որտեղից էլ գալով Եղիչէ Առաքեալի վանքը թէ ուխտ, թէ ամարանոց, պառկում են շաբաթներով եկեղեցու սենեակներում, ճաշելով եկեղեցու սեփական այն ամաններում, որոնցով կերակրվում են բոլոր ուխտաւորները։

Եւ ահա, թէ ինչու է որ բատ օրէ աճում թոքախտը Նուխում, որը տարիներ առաջ գոյութիւն չունէր այստեղ։ Մի կողմից մետաքսեայ գործարանների հոտը, իսկ միւս կողմից այդ թոքախտաւոր պարոնների թարախներից բարձրացող բացիլները, խառնվելով իրար, տարածվում և ապականում են օդը։

Եղ. Սայամեան

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Պեատիգօրսկ, սեպտեմբերի 1-ին

«Մշակի» մէջ զետեղված լուրերից երեւում է, որ ժողովուրդը մեծ հարկաւորութիւն է զգում անասունների «դաբաղ» (афта, ящуръ) կոչված հիւանդութեան դէմ կռւելու միջոցները իմանալու, դրա համար պարտք եմ համարում հաղորդել այդ միջոցները։

«Դաբաղ» հիւանդութիւնով բռնված անասունների բերանի և ոտքերի վէրքերը հարկաւոր է օրը երկու անգամ լուանալ 2°/o կապոյտ պիօկտանինով (Синій піоктанинъ), դեղի 2 մասը լուծելով 100 մաս պարզ ջրի մէջ։ Այդ դեղը մի երկու օրվայ մէջ բոլորովին առողջացնում է վէրքերը։ Նրա մախալը արժէ մօտաւորապէս 15 կոպ., այդ քանակութեամբ կարելի է բժշկել մի քանի հիւանդներ։

Ոտքերի վէրքերը առաջ են գալիս նոյն իսկ հիւանդ կենդանիների բերանի լորձի (թուքի) դիպչելուց, այդ պատճառով ոտքերը վարակվելուց պաշտպանելու համար հարկաւոր է ցաւը երևալուն պէս բոլոր անասունների արմուկները (պճեղները) մէջը և նրանցից վերև մօտաւորապէս չորս մատնաչափ տարածութեամբ ծեփել սև ձիւթով։

Հիւանդութեան դէմ կռւելու ամենաարդիւնաւոր միջոցը ցաւի պատուաստումն է. դրա համար հիւանդութիւնը երևալուն պէս վեր են առնում «դաբաղով» ամենածանր հիւանդ կենդանիների բերանի թարախախառն լորձը (թուքը) և սպունգով մի քանի անգամ ամուր քսում են (պատուաստում են) բոլոր առողջ կենդանիների շրթունքներին և լինդերքներին։ Պատուաստումը այն մեծ նշանակութիւնն ունի, որ պատուաստած կենդանիները շատ թեթև և կարճ են հիւանդանում, շատերը մինչև անգամ աննշան և մի երկու օրից յետոյ առողջանում են. նրանց կաթն էլ համարեա չի պակասում և իրանք չեն լղարում։ Բացի դրանից, պատուաստելուց յետոյ հիւանդութիւնը կարճ միջոցում, մէկ կամ երկու շաբաթուայ ընթացքում, բոլորովին վերջանում է և անասունների ոտքերը ազատ են մնում վարակուելուց։

Ցաւը կաթի միջոցով կարող է հաղորդվել մարդկանց, մանաւանդ երեխաներին, այդ պատճառով «դաբաղով» վարակված տեղերում հիւանդ կենդանիների կաթը չը պէտք է գործածել և մինչև հիւանդութեան վերջանալը առհասարակ հում կաթ չը պէտք է գործածել, այլ լաւ եփած։

Անասնաբոյժ Ռ. Կոստանեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Մոտ օրերումս կը վերջանայ Պետերբուրգում գիւղատնտեսական կոմիտէների աշխատութիւնների տպագրութիւնը, որոնք կը կազմեն 60 ստուար հատորներ։ 45-ը նրանցից նուիրված են եւրոպական Ռուսաստանի նահանգներին, 2-ը—Լեհաստանին, 1-ը—Կովկասին և 3-ը—Սիբիրիային։ Ընդամենը տպագրված է 600 օրինակ, որոնք և կուղարկվեն կառավարչական հիմնարկութիւններին, գիւղատնտեսական կարիքները քննելու համար կազմ-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՂՐԻՄԻ ԱՓԵՐԻՑ

(Թռուցիկ տպաւորութիւններ)

I

Ո՞վ բանաստեղծը չէ երգել գողարիկ Ղրիմի գեղածիծաղ ափերը, ո՞ր անցորդը չէ հրապուրվել նրա հրաշալի բնութեան տեսարաններով... Եւ յիրաւի, Արարչի արդար ստեղծագործութեան ո՞րքան սքանչելի նմուշն է սա, ո՞րքան մի առանձնաշնորհված բնավայր, որի իւրաքանչիւր անկիւնը, իւրաքանչիւր տափաստանը մարդու սիրտ է թովում, աչք փաղաքշում։ Ահա ձեր առաջն է Սև ծովը. նայեցէք նրա անդորր, անխռով մակերևոյթին, նրա պատկառելի դէմքին, որի պայծառ արտայայտութիւնը երբեմն տեղի է տալիս խոժոռ ու մռայլ արտադրութեան. նայեցէք. ծովի ափերում տարածված անծայր անտառներին, բուժիչ խաղողի, անուշ մրգեղէնի անթիւ այգեստաններին. տեսէք, նրանք ուղղակի ժպտում են ձեր աչքերին, գրաւում են ձեր ամբողջ ուշադրութիւնը և դուք, ընկնելով նրանց ախորժալուր շշուկների քաղցր ազդեցութեան տակ՝ զգում էք ձեզ միանգամայն վերածնված, միանգամայն վերակենդանացած...

Օգոստոսը ապմկում է... Ամբողջ հիւսիսը այստեղ է, ոմանք եկել են առողջութիւն որոնելու, ոմանք նրա սքանչելի բնութիւնը դիտելու, ոմանք էլ փող վատնելու—լոկ քէֆի համար։

Ինձ ևս վիճակվել էր անողոք հակառակորդիս քմահաճ անօրէնութեանը յանձնարարվել. ես նետվեցի այս երկիրը՝ քայքայված ույժերս այստեղ վերականգնելու նպատակով...

Հին-Ղրիմ բարձրավանդակից չորս վերստ հեռու՝ անտառի գեղավայր մի խորշում գտնվող մենաստանը ս. Խաչ վանքից եմ սկսում իմ ճանապարհորդութիւնը։ Ահա սա է այն միակ մենաստանը, որը իր խորհրդաւոր, վեհ լռութեամբ վկայում է անցեի տարագրված հայերի փառաւոր անցեալը, սակայն և այն միակ վկան է սա, որը իր լուռ հեծեծանքով շարունակ ողբում է օտարամոլ հայերի ներկայ անգոյն վիճակը... Ահա ամբողջ հինգ դար է նա մնում է որպէս աւերակ Անիից անջատված մի բեկոր, ամբողջ հինգ դար է՝ նա չէ փոխում իր գեղեցիկ դիրքը—դարերի օրհնութ, ծանր ընթացքը իր սև դրօշմը չէ կնքել նրա վեհապանծ ճակատին, սակայն... որչափ սերունդներ են փոխվել նրա գոյութեան օրից, որպիսի փոթորիկներ են անցել նրա դժբաղդ որդիների գլխից, ո՜հ, որչափ փոփոխութիւն, դաժանութիւն նրա այժմեան զաւակների մէջ... Վերջին անգամ դարձրի նրա վրա իմ հայեացքը և մեր կառքը մի ոլոր պտոյտով դէպի ցած սլանալով ծածկեց իմ աչքերից հնադարեան վանքը, թողնելով նրան անտառախիտ լեռան սրեմսեան լանջերում։ Այո, սա այն փրկարար վայրերից մէկն է, որի փայլուն արևը երբեմն պայծառացնում է տառապեալ մարդկանց դժգոյն դէմքերը, որի լուրկ հովի լուսնեակը՝ թռչնիկների գիշերային գեղգեղմայլ դայլայլիկների հետ՝ երբեմն երջանկութիւն է շնորհում նրանց... Այժմ հեռանում եմ հնութեան փառք ու պարծանքի բեկորներով լցված այն բազմաչարչար վայրերից, անուշահոտ բուրմունքով ծաւալվող, թաւշապատ խորշերով հարուստ այն վիթխարի անտառներից, անջատվում եմ պարզ, վճիտ աղբիւրակների այն քաղցրալուր երաժշտութիւնից, որոնք, բոլորը, բոլորը իմ կեանքը երբեմն լցրել են անցեալի բազմաթիւ քաղցր ու տխուր վառ յիշողութիւններով...

Բաւան րոպէի ընթացքում մենք հասանք Հին-Ղրիմ—երկրի նախկին տիրապետող խաների մայրաքաղաքը։ Նրա ապարանքների բազմաթիւ աւերակները, որոնց բեկորները վկայում են նրա նախկին փառքի գոյութիւնը՝ ամենուրէք տարածված են։ Քաղաքակրթված գէնովացիների տիրապետութեան ժամանակ, երբ երկիրը ծաղկում՝ զերծ էր թաթար հրոսակների աւազակային արշաւանքներից, հին Սուրխաթը կարաւանային լայնածաւալ առևտուր էր վարում հեռաւոր Ասիայի հետ։ Անցել են այն օրերից մի քանի դարեր և այժմ նրա բնակիչներն են հայերը, յոյները, ռուսները, թաթարները և բուլղարները։ Քաղաքը պարփակված է, բացի արևելեան կողմից, կիսաբոլորակ լեռնաշղթաների մէջ։ Հետաքրքիր է նրա Աղբրմիչ սարը նրանով մանաւանդ, որ հարուստ է բազմաթիւ կիրճերով, քարանձաւներով և անդունդներով, որոնցից մէկին հին տեղացիները «դժոխքի մուտք» անունն էին տալիս։

Արևը դեռ մի ամբողջ ժամ միջոց ունէր անյայտանալու մայր երկրի ծաղկաւուն բնութեան աչքերից, երբ մեր կառքը սրընթաց դուրս սլացաւ Հին-Ղրիմի վերջին փողոցից։ Մեր առաջը բացվեց մի հրաշալի տեսարան. ամբողջ մի քանի վերստ հարթ տարածութեան վրա սփռված են դալարագեղ մարգագետիններ, ճանապարհից դէպի աջ երևում են իրար անընդհատ յաջորդող բարձրաւանդակներ, ծիծաղուն հովիտներ, իսկ դէպի ձախ և ուղիղ՝ իրարից անջատ—բազմաթիւ աւաններ։ Ահա նկարիչ Այվազովսկու գիւղերից Սուլթանին և Շեյխմամայը, ահա Ճիւմելին և Կրինիչկան, որոնց շրջակաները իրանց բանջարանոցներով են զարդարել Թիւրքիայի ջանասէր հայ գաղթականները։ Իւրաքանչիւր աւանը, ամբողջապէս թաղված լինելով կանաչաւուն բնութեան գրկում, հեռուից կարծես մի մի փնջած ծա-

ված առանձին խորհրդակցութեան անդամներին և պետական գրապահեստներին։

—

Մեզ հաղորդում են, որ մօտ օրերումս Թիֆլիսում, Մ. Մարտիրոսեանի տպարանում, կը սկսվի «Պատմագիրք հայոց» հրատարակութեան տպագրութիւնը։ Յիշված հրատարակութեան համար յատկապէս բերել տուած տառերն ու թուղթն արդէն պատրաստ են։

—

Մեզ հաղորդում են, որ Կովկասեան Գիւղատնտեսական ընկերութիւնը մտադիր է քննութեան ենթարկել օրէնսդրութեան այն ծրագիրը, որ մշակված է մայրաքաղաքում գինու կեղծումների դէմ մաքառելու նպատակով։

—

Մեզ հաղորդում են, որ խոտ հնձող մեքենաները սկսել են մուտք գործել մեր գաւառները։ Նրանք երեւացել են Կարսի նահանգում, Բօրչալուի գաւառի Վօրօնցօվկա և Նոր-Բայազէթի Ելենօվկա գիւղերում։ Այն տեղերում, ուր հողը հաւասար է և խոտը ոչ չափազանց կարճ հնձող մեքենան հանդիսանում է իբրև օգտաւէտ գործիք, որ թէ կրճատում է աշխատանքը և թէ էժանացնում նրան։

—

«Рус. Вѣд.» լրագիրը հաղորդում է, որ կոմս Լ. Տօլստօյ իր ծննդեան 75-ամեայ յոբելեանի օրը անցկացրեց Եասնայա Պօլեանայում՝ իր որդոց, նրանց ընտանիքների և մի քանի մօտիկ բարեկամների ու ծանօթների նեղ շրջանում։ Այդ օրը նշանաւոր վիպագրողը ստացաւ բազմաթիւ շնորհաւորական հեռագիրներ և ուղերձներ Ռուսաստանի զանազան տեղերից և արտասահմանից։ Խօսակցելով փոքր ինչ իր հիւրերի հետ, Տօլստօյ, ըստ սովորութեան, գնաց իր առանձնասենեակը աշխատելու։ Ժամի երեքին, վերջացնելով աշխատանքը, նա գնաց ձիով զբօսնելու, ինչպէս այդ անում էր ամբողջ ամառվայ ընթացքում։ Ապա վերադառնալով՝ ճաշի ժամանակը և երեկոն նա անցկացրեց խօսակցելով Եասնայա Պօլեանայում ժողովված բոլոր հիւրերի հետ։ Տօլստօյ բոլորովին առողջ է և լի աշխատելու եռանդով։

—

Թիֆլիսի քաղաքային վարչութիւնը մօտ օրերումս հրաւիրեց «Հէլիօս» ընկերութեան ներկայացուցիչ Մայէրին և յայտնեց նրան, որ ներքին գործերի մինիստրութիւնը հաստատել է Թիֆլիսում էլէքտրական լուսաւորութիւն մտցնելու նախագիծը։ Մայէր յայտնեց, որ ընկերութիւնը նախագծի կատար ածումը յանձնարարել է ինժեներ Զիգվէրտին, որը այժմ Թիֆլիսում չէ գտնվում։ Այս պատճառով վարչութիւնը դիմեց «Հէլիօս» ընկերութեան՝ խնդրելով շուտով ուղարկել Թիֆլիս իր լիազօրին։

—

Մայրաքաղաքի լրագիրները հաղորդում են, որ երկրագործութեան և պետական կալուածների մինիստրութեան հաշւի մէջ 1902 թւի համար կայ հետեւեալ Բարձրագոյն հրամանը. «Հաւանութիւն տալով երկրագործութեան մինիստրի կարգադրութեանը, որը ձրի փայտ էր բաց թողել Շամախի քաղաքի երկրաշարժից վնասված ազգաբնակութեանը՝ վառելիքի և շինութիւնների համար, Նորին Կայսերական Մեծութիւնը բարեհաճեց հրամայել օգանից յետոյ էլ ձրի և չուտ փայտ բաց թողնել նոյն նպատակով ամենամեծ չափերով այն բոլոր անտառներից, ուր այդպիսի կարիք կը լինի։»

—

Մայրաքաղաքի լրագիրները հաղորդում են, որ կառավարութիւնը մտադրութիւն ունի երկաթուղային դէպարտամէնտը հանել ֆինանսների մինիստրութեան իրաւասութիւնից և միացնել նրան հաղորդակցութեան ճանապարհների մինիստրութեան հետ, իսկ նոյն ֆինանսների մինիստրութեան ուսումնարանական բաժանմունքը միացնել ժողովրդական լուսաւորութեան մինիստրութեան հետ։

—

Սեվաստօպօլից «Нов. Время» լրագրին հեռագրում են. «Սև ծովի վրա անընդհատ սաստիկ փոթորիկներ են լինում։ Առագաստաւոր նաւերը մի քանի օր ապաստում են նաւահանգիստներում, մեծ վնասներ կրելով։ Շոգենաւային կանոնաւոր երթեւեկութիւնը խախտված է։»

—

ՆՈՐ-ԲԱՅԱԶԷՏԻՑ մեզ գրում են. «Սեպտեմբերի 2-ին դերասան Անդրանիկը, տեղիս սիրողների հետ, ներկայացրեց «Մեծապատիւ Մուրացկաններ» պիեսը։ Գ. Անդրանիկը իր դերի մէջ շատ լաւ էր, իսկ սիրողները աջող տարան իրանց դերերը։ Գալով մուտքին, պէտք է ասել, որ աջող չէր, քանի որ արանից 15 օր առաջ էս տրվեց մէկ ներկայացում. բացի արանից հասարակութիւնն էլ զբաղված է իր գործերով։»

—

ՂՈՒԲԱՑԻՑ մեզ գրում են. «Ամառը անցաւ յաճախակի անձրևներով և որոտումներով։ Եղանակը զուրտ էր անում. համարեա աշնանային էր։ Ամարանոց եկողները անցեալ տարվանից աւելի սակաւ էին եկել. մի քանի անգամ տեղի ունեցան սիրողների ներկայացումներ յօգուտ կլուբի նոր ֆոնդի։ Օգոստոսին խաղացին Ա. Արէլեանի «Ֆօնտանը խփում է» նոր պիեսը, որի մէջ աչքի էին ընկնում իրանց խաղով Բօդդանով՝ կառավարչի դերում, և հանքատիրոջ դերը կատարող մի ուսանող։ Նոյն գիշերը խաղացին «Կրաթ-Կրաթ», որի մէջ աչքի էր ընկնում իր խաղով Գ. Մելիք-Դաղայեանցը՝ Թուրքի դերում. ռուսերէն լեզուով խաղացին «Первый и послѣдній разъ» պիեսը։ Մուտքը եղաւ մօտ հարիւր րուբլի։»

—

ՇԻՐԱԿԻՑ մեզ գրում են. «Գիւղերում կալսելը համարեա վերջանալու մօտ է. հացը թէպէտ առատ է, բայց դրանից քիչ է օգտվելու գիւղացին։ Շիրակի պէս մի խուլ անկիւնում վաշխառութիւնը խոր արմատներ է գցել, որից ազատվելը համարեա անհնար է շուշնաւորի համար, երբ նա ստիպված է թումանին 20 կոպէկ տոկոս է տալիս, ուրեմն տարեկան 24 րուբլի. տոկոսը աւելացնելով այդ մայր գումարի վրա, գրում են մուրհակում—«պարտ եմ տալու տասնից չահի այսքան րուբլի և այլն»։ Գիւղացին գետ իր արդիւնքը տուն չը տարած պէտք է գոհւ ցում տալ վաշխառուին, որը արծուի աչքերով հետեւում է, թէ ով է «թէշ» արել ցորենը, որ գնայ չափէ. այդ անողը մի հրէայ է, գաւառումս յայտնի «Ռայիմ աղան», որը մի քանի տարի առաջ տակառ ման ածող չարչի էր, իսկ այժմ տասնեակ հազարների տէր է։ Այժմ լի են գիւղերում չարչի հրէաները, որոնք մնայտ տզրուկի պէս կամաց կամաց քամում են գիւղացու տանից այն էլ ապաւված արիւնը։»

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՉԻՆԱՍՏԱՆԸ ԶԱՐԹՆՈՒՄ Է

—

Եթէ աչքի առաջ ունենանք Չինաստանի վերջին տասը տարիների պատմութիւնը, զարմանալով պիտի տեսնենք, որ սկսած 1897 թւականից եւրոպական պետութիւնները ամեն կերպ արգելք են հանդիսանում մարդկային ցեղի 1/4 մասի կուլտուրական զարգացմանը։ Վերջիններիս գրգռմամբ չինական կառավարութիւնը հայրենիքի բարենորոգութեան համար միայն մտածող գործիչներին բանտարկութեան և աքսորանքի է ենթարկում։ Պէկինից և Շանգհայից հալածված լուսերի հոսանքն, բաւականաչափ չինացի ուսանողներ և գրողներ ձերբակալված են, իսկ ամանք էլ Ամերիկա են փախել։

Ուրախալի է տեսնել, որ գոնէ Անգլիան և Եապօնիան բարենորոգիչներին կողմնակից են և Չինաստանի վերածնութեան բարեկամներ են։ Վերջին ժամանակներում առաջին մինիստր Բալֆուր անգլիական համայնքների ժողովում յայտնել է, որ բրիտանական կառավարութիւնը վճռել է Շանգհայում վեհափառութեան վիրաւորանքի համար դատապարտված չինացիներին չը յանձնել իրանց կառավարութեան։

Շատ աւելի ակտիւ և կրթիչ է Եապօնիայի կատարած դերը Չինաստանում և, ինչպէս երեւում է, վերջինս խիստ մեծ ազդեցութիւն ունի այդ երկրում։ Վերջին երեք տարիներում մեծ քանակութեամբ չինացի երիտասարդներ դիմում են Եապօնիա՝ բարձրագոյն կրթութիւն ստանալու համար. իսկ եապօնացիք արդէն մի բարձրագոյն դպրոց են հիմնել Չինաստանում, ուր դասախօսում են միայն եապօնացի պրօֆէսօրներ։ Չինացի զօրքերը կրթվում են շատ անգամ եապօնացի զօրապետների ձեռքով. այսօր Չինաստանում 70 եապօնացի օֆիցէրներ կան, որոնք խիստ հաւատարմութեամբ ծառայում են չինական պետութեան. և վերջապէս եապօնացի վարպետների ձեռքով Չինաստանի համար պատրաստվել են երեք ռմբաձիգ մարտանաւ։

Սրա հետ միասին պէտք է նկատել, որ չը նայած կառավարութեան կողմից յարուցած խիստ հալածանքներին, մօնղօլական ցեղի մէջ հանդէս է եկել առաջադէմների մի ստուար խումբ, որ ամեն կերպ աշխատում է զարթեցնել իր հայրենակիցներին Մօրփէոսի կապանքներից։ Այս իրողութիւնը հաստատում է «Contemporay Rewiou» թերթի Շանգհայից հասած մի ուշագրաւ թղթակցութիւն, ուր առաջ են բերված այն հարցումները, որոնք առաջարկվում են չինացի ուսուցիչների կողմից դպրոցաւարտ ուսանողներին, իբրև վերջին շարադրութեան նիւթ, դրա՛ որ պատասխանելու։

Ահա դրանք։

Թիանսի և Անհուի նահանգներում. 1) Իրաւունք ունի մեկը միջազգային օրէնքներով ուրիշների ներքին գործերի մէջ խառնվելու։

2) Որ ժամանակից սկսվեց ոսկու տեղգակտնութիւնը. ինչու համար ոսկին աւելի է թանգանում։ Ովքեր են ոսկու և արծաթի առաջնորդող կուսակցութիւնները։ Պատերազմական տուգանքի վճարման ժամանակ արծաթի արժէքի անկման պատճառով ահագին տարբերութիւն է առաջ գալիս։ Ինչ միջոց կայ դրա դէմ։

Հոփէհ և Հունան նահանգներում. 1) Ռուսաստանը ինքնակալ միապետութիւն է. Անգլիան սահմանադրական. Ամերիկայում իշխողը ժողովուրդն է և ընտրվում է ժողովրդից։ Այս գաղափարներից որ մեկը Չինաստանի համար օգտակար կամ վնասակար կարող է լինել։

2) Երբ Նապոլէոն իր ռէֆօրմները եւրոպական եղանակով էր մշակում, ամանք գովում էին և ամանք էլ պախարակում։ Պարզէք այս երկու չափերները և ցոյց տուէք, թէ Չինաստանը ինչ պէտք է անէ։

Թէկիանգ նահանգում. 1) Արևմտեան եւրոպական կրթութիւնը բղխում է յունականից, ցոյց տուէք ուրեմն յունական դպրոցների սկիզբը և զարգացումը։

2) Որոնք են Եւրոպայի տնտեսական ծաղկման աղբիւրները։ Չինաստանը աղքատ է. ինչ պէտք է անէ նա տնտեսապէս ապահովվելու համար։

3) Քանի որ եւրոպական օրէնքները ծագում են հռոմէականից, ցոյց տուէք հռոմէական օրէնքների սկզբնաւորութիւնը և առաջադիմութիւնը։ Չինաստանը տուժում է էքստերիտօրիալութեան պատճառով (այժմ Չինաստանում ապրող օտար երկրացիները չինական օրէնքներին և դատարանին չեն ենթարկվում), ցոյց տուէք թէ ինչպէս կարող է լինել, որ Չինաստանը կրկին իր երկրի տէրը լինի, ինչպէս օտար ազգերը իրանց երկրի տէր են։

4) Երկրաչափութիւնը և աշխարհագրութիւնը Եւրոպայում խիստ գնահատվում են աշխարհամասերի ֆիզիքական տարբերութեան պատճառով. տարբեր են նաև զանազան երկրների բարքերը ու վարքերը. ինչ պէտք է սովորէ Չինաստանը այս իրողութիւնից։

5) Եւրոպական բնական գիտութիւնների մէջ շարունակ նորանոր գիւտեր են լինում և նոր մեքենաներ հնարվում։ Օտարները իրաւունք են ստացել մեր սեփական երկրի մէջ գործարաններ հիմնելու. այսպիսով Չինաստանը կորցնում է իր երկրի կրկին մի մասը։ Ինչ կարող ենք անել մենք այս բանի առաջն առնելու համար։

Շանթունգ նահանգում. 1) Օտար երկրներում հարկերը խիստ ծանր են. բայց և այնպէս վճարվում են գիւտութեամբ. ինչ է սրա պատճառը. և ինչպէս կարող է չինական պե-

---

ղիկներ լինեն։ Դէպի առաջ ենք գնում. Խոտա-Դէօզ կոչված օթեանից վեր բարձրանալիս, հեռու հօրիզոնի վրա տեսնում ենք Սև ծովի ափերը։ Կենսատու ջերմաշունչ հովը անընդհատ փչում է հարաւից և մարդ, անկարող լինելով նկատել սահող րօպէների այնքան արագ ընթացքը, զգում է յստակ, պարզ և թափանցիկ օդի բարերար ազդեցութիւնը։ Մեր յետևն են մնացել արևի վերջին ճառագայթներից փայլփլող՝ Ղրիմի դալարալանջ, անտառախիտ լեռնային բոլորակ շղթաները։

Անցնելով խճուղու քսան և երեք վերստը, գիշերային թափանցիկ խաւարով շրջապատված՝ մտանք Թէօդօսիա—հռչակաւոր ծովանկարիչ Այվազովսկու ծննդավայրը։

Թէօդօսիան հիմնել են հասարակապետական Միլետացիները, որ և յունարէն նշանակում է «Աստուծոյ պարգև»։ Ինչպէս վկայում է Բօսֆօրի հին պատմութիւնը, Քրիստոսից 4 դար առաջ Սոթիրոս ազգան փորձեց պաշարել Թէօդօսիան, սակայն գրաւողը եղաւ նրա որդի Լևքօն, որին յաջորդեց Միհրդատը։ Քաղաքը բարեզարդում և ծաղկած դրութեան են հասցնում գաղթական յոյները, սակայն շրջապատող անհանգիստ տարրերի անվերջ յարձակումները քաղաքը միանգամից դարձնում են աւերակ. և միայն XIII դարում գենուեզցիները վերաշինում են նրան և անունը դնում Կաֆֆա։ Հազիւ է սկսում քաղաքը ծաղկել, երբ Թուրքերը անխնայ աւերածութիւնների ենթարկելով նրան՝ գրաւում են 1475 թւին և անմիջապէս կանգնեցնում իրանց մինարէթները, կառուցանում են պալատներ, ապարանքներ, որից յետոյ Կաֆֆան տրաւուղվելով, դառնում է Քէֆէ, որը մինչև հիմա էլ գործածվում է ամբողջ Ղրիմի ազգաբնակութեան մէջ։ Եղել է ժամանակ, որ Թուրքերը Թէօդօսիան կոչել են փոքր Ստամբօլ կամ Ղրիմ-Ստամբօլ։ Այժմ Թէօդօսիան ծովեզրեայ նշանաւոր քաղաքների շարքն է անցել և ունենալով մեծ նաւահանգիստ, երկաթուղային երթևեկութիւն, միանգամայն հասել է ծաղկած դրութեան, որի շնորհիւ վերջին տասնամեակում նրա բնակչութեան թիւն էլ գրեթէ կրկնապատկված ենք տեսնում։ Քաղաքը այժմ ունի գեղեցիկ եւրոպական շինութիւններ, էլեկտրական լուսաւորութիւն, հեռախօս, բացառիկ յատկութիւններ ունեցող լողարաններ, թանգարան, աւերակ դարձած հնութիւնների բեկորներ, միջնակարգ դպրոցներ, ուսուցչական ինստիտուտ, որը տեղաւորված է հայոց Խալիպեան դպրոցի շէնքում, նաւորդական ուսումնարաններ, բարեկարգ հիւրանոցներ և այլն և այլն։

Սակայն Թէօդօսիայի փառք ու պարծանքն է համարվում անշուշտ հանգուցեալ Այվազովսկու նկարների ցուցահանդէսը, որը գտնվում է Գէնուէզեան փողոցի վրա։ Պատկերահանդէսի ընդարձակ դահլիճում դրված են բազմաթիւ պատկերներ, որոնց շարքում, ի միջի այլոց, գտնվում են հանգուցեալ նկարչի վերջին աշխատութիւններից մի քանիսը. նշանաւոր են՝ «Քրիստոս Գալիլէյի լճի ափին», «Մեծն Պետրոսը Ֆինլանդիայի շխերներում» և այլ պատկերները։ Յիշեալ պատկերահանդէսը հանգուցեալ կտակի համաձայն՝ նուիրված է քաղաքին։ Ընթերցող, ես ձեզ խորհուրդ եմ տալիս անպատճառ այցելել այդ մեծ նկարչի հանճարեղ վրձինի ստեղծագործութիւնների գալերէյան, եթէ երբ և իցէ վիճակվի ձեզ անցնել Թէօդօսիայով։ Նայեցէք նրա «Նոյի խորտակումը» հսկայական պատկերի վրա, տեսէք, մոգիչ երկնատարք հանճարի, արբագործ վրձինի արդիւնք է դա. թափանցեցէք նրա մէջ, ջանացէք ըմբռնել պատկերացրած արհաւիրքի ամբողջ սարսափը։ Ահա գերագոյն զօրութեամբ լցված յաղթանակող ովկիանոսը, որի ուժեղ յորձանքների ճիրաններում յուսահատ գալարվում է ողորմելի գաճաճը—մարդը իր պատսպարան՝ տաշեղի նման նաւով. ահա խառնված, մռայլ մթնոլորտը, նրա յաւիտենական պաշտպան, աջ բազուկ՝ կայծակի, շանթալից մըրրիկը, ահա աշխարհային այն չարագուշակ տարրերը, որին յաւիտեան գոհ դառնալ վիճակված է միայն մարդուն, տիեզերքի այդ գծուծ արարածին... Այստեղ էլ, ընթերցող, մրմնջում է ձեր ականջին «ուժեղի զօրն է թոյլը» անողոք սկզբունքն...

Ինչպէս յայտնի է, Այվազովսկին վախճանվեց 1900 թւին և թաղվեց այստեղի ս. Սարգիս հայոց եկեղեցու գաւթում, որը գտնվում է Արմէնասկի փողոցի վրա։ Դեռ շատ ժամանակ չէ, որ հանգուցեալի շիրիմը արժանացաւ մահարձանի։ Կոթողը դրված է մարմարեայ հիմքի վրա և ամբողջապէս մարմարիոնից է շինած. ունի հետեւեալ հայերէն մակագրութիւնը։ «Մրնվեց մահկանացու, թողեց անմահ յիշատակ. Յովհաննէս Կոստանդինեան Այվազովսկի, ծնվեց 1817 թ. 17 յուլիսի. վախճանվեց 1900 թ. 19 ապրիլին»։

Թէօդօսիայում ապրում են աւելի քան 120 տուն հայեր, որոնց մեծ մասը վաճառականութեամբ են պարապում. ունեն ծխական-եկեղեցական միդասեան դպրոց երկու ուսուցչով, և չորս եկեղեցի՝ մի քահանայով։ Նոր սերունդը այստեղ իր պապենական սովորութիւններից ժառանգել և առաջադիմել է միայն «տօլմա և փլաւ» ուտելու ընդունակութեան մէջ։

Ուշ երեկոյեան երկաթուղին մեզ կը տանի դէպի Սիմֆերօպօլ, որտեղ քաղաքի առանձնայատկութիւնները դիտելուց յետոյ, մենք կանցնենք Բաղչիսարայ, Սևաստօպօլ և այնտեղից՝ Եալտա։

Սուքիասեան

Թէօդօսիա

ուռւթիւնը եւ իր հարկերի աղբիւրները եւ ընդարձակել։

2) Միջազգային օրէնքով Չինաստանում ժամանակաւորապէս ազատ օտարները պէտք է պաշտպանուին. այս օրէնքը մենք պէտք է տանք պահենք, որպէս զի օտարները իրանց հանգիստ զգան։

3) Բացատրւէր այն օգուտները, որ կը ստացուի Շանթունգի համար՝ երկաթուղու։

4) Բացատրւէր քիմիայի օգուտը երկրագործութեան համար։

Այս ուշագրաւ հարցերը ցոյց են տալիս, թէ որքան խոր ուսումնասիրութեան նիւթ են դարձրել չինացի մտածողները իրանց հայրենիքի ճգնաժամը։ Որքան հոգեկան արիութիւն է պէտք մի ամբողջ պետութեան համար այսչափ լուրջ խնդիրների վերաբերեալ, այսքան պարզ հարցումներ գնելու...

Տ.

Շարօլոտէնբուրգ-Բեռլին

ԻՆՉ Է ԿԱՏԱՐՎՈՒՄ ՄԱԿԵԴՈՆԻԱՅՈՒՄ

Սարաֆովը կենդանի է.—Մի քանի օր առաջ լրագիրները Թիւրքական աղբիւրներից լուր էին տարածել, որ իբր թէ մակեդոնական յայտնի հերոս Բորիս Սարաֆովը սպանված է։ Այժմ «Temps»-ին հաղորդում են Սոֆիայից, որ ճիշդ չէ այդ լուրը, որ Սարաֆովը մի ընդհարման ժամանակ միայն թեթև վէրք է ստացել, իսկ այժմ ողջ և առողջ շարունակում է անձնազոհ գործունէութիւնը 800 ընկերների հետ միասին։

Եւ այդ գործունէութիւնը կատարեալ պատուհաս է դարձել Թիւրքիայի համար, օրէցօր նորանոր բարդութիւններ առաջացնելով, աւելի ու աւելի մեծ սպառնալիքներ տալով։ Այժմ լրագիրները մի ուրիշ սենսացիօն լուր են հաղորդում այդ «անվախ ու անսպառ ատաման» մասին։

Մակեդոնիայի գլխաւոր վերատեսուչ Հիլմի փաշան մի շրջաբերական գրութեամբ յայտարարում է, որ իբր թէ Բորիս Սարաֆովը գրաւոր կերպով նախազգուշացրել է Բ. Դրանը, թէ նա մտադիր է սպանել՝ կամ անգլիական հիւպատոսին կամ ամերիկական միսսիայի անդամին և կամ «Daily Express» թերթի թղթակցին։ Ըստ երևոյթին այդպիսի սպանութեան նպատակն է գրգռել Եւրոպային և շուտափոյթ միջամտութիւն առաջացնել։

Իսկ անգլիական հիւպատոսը այդ մասին իր կողմից պատասխանել է, որ իւրաքանչիւր անգլիացու սպանութեան համար նա պատասխանատու է համարելու Թիւրք կառավարութեանը և ոչ մակեդոնացիներին։

Այդպիսով հնարագէտ Հիլմի փաշան չէ հասել իր նպատակին։ Նա ուզեցել է անգլիացիներին գրգռել Սարաֆովի և նրա զինակիցների դէմ, բայց բոլորովին հակառակ հետևանքի է հասել։

—

Մահմեդը յարութիւն է առել.—Վաղուց արդէն յայտնի է Թիւրք ամբոխի ազգասէրութիւնն ու կրօնական մոլեռանդութիւնը, որոնք այնքան արիւնոտ էջեր են թողել պատմութեան ընթացքում, այնքան զոհեր են տարել մարդկութիւնից։ Ժամանակը առհել է առաջ, դարերն անցել են միմեանց յետևից, բայց ամբոխային այդ յատկութիւնները դեռ չեն վերացել։ Նրանք միշտ էլ արտայայտվել են, մանաւանդ երբ Թիւրքիան իրան նեղված վիճակի մէջ է զգացել, երբ Թիւրք ժողովուրդը իր կրօնական պատիւը արատաւորված է համարել։

Այժմ մի այդպիսի ժամանակաշրջան է սկսվել Թիւրքիայում, գնահաւր մակեդոնացիները գլուխ են բարձրացրել և ուզում են ազատվել մահմեդական լծից. խալիֆ սուլթանը ամեն ջանք գործ է դնում այդ ապստամբներին լռեցնելու համար, բայց ամեն ինչ ապարդիւն է անցնում և ապստամբութիւնը շարունակում է իր սպառնական ընթացքը։

Ահա հէնց այդ պատճառով ազէտ ամբոխի երևակայութիւնը օգնութեան է կանչում իր մարգարէին՝ Մահմեդին։

«Kurj. Por.» թերթին հեռագրում են այդ մասին հետևեալ տեղեկութիւնը.

—«Մեդինայի չէյխը հեռագրով յայտնել է սուլթան Համիդին, թէ Մահմեդը բարձրացել է իր գերեզմանից Մեդինայում և բացականչել է.

—Ալլահ, պաշտպանիր քո ժողովրդին։

Գերեզմանի պահապան վեց ներքինիները տեղն ու տեղը մեռել են»։

Եւ այդ սենսացիօն լուրը, ի հարկէ, կայծակի արագութեամբ անցնում է ամեն կողմ, կրկնվում է ամեն մի «մուսլէմի» բերանից, աւելի ու աւելի գրգռելով նրանց կատաղութիւնը քրիստոնեաների դէմ։

Պարզ է, որ միայն չէյխի երևակայութիւնն է Մահմեդին յարութիւն տուողը և Ալլահին օգնութեան կանչողը։ Բայց արդեօք Մահմեդն ու Ալլահը կարողանալու են լցնել կրօնական այն վիհը, որ Թիւրք կառավարութիւնը տասնեակ տարիների ընթացքում փորել է իր համար՝ ճնշող, աւերող քաղաքականութեամբ. արդեօք կարողանալու են լռեցնել մի ժողովրդի ձայնը, որ դարերով ծանր լծի տակ ճնշվելուց յետոյ այժմ ազատութիւն է պահանջում։

Շատ կասկածելի է։

—

Բուլղարուհի զօրավար.—Ինչպէս յայտնի է մակեդոնացիների օրհասական կռուը կանանց էլ ոտքի է կանգնեցրել և նրանք տղամարդկանցից պակաս չեն մնում իրանց հերոսութեամբ։ Նրանք կռվում են հրոսակների շարքերում, նրանք խնամում-բուժում են վիրաւորներին, հաց ու ռազմամթերք են հասցնում կռւող մակեդոնացիներին—մի խօսքով կատարեալ հերոսուհիներ են դարձել։

Ահա մի այդպիսի հերոսուհու կենսագրութիւնն է առաջ բերում «Новости» լրագրի թղթակիցը։ Այդ հերոսուհի զօրավարը Կատարինէ Արնաուտովան է։

—Ես ծնվել եմ Մակեդոնիայի Լիբէադով գիւղում, 1878 թւականին, պատմում է նա իր մասին։ Հայրս հարուստ ֆէրմէր էր։ Իմ մանկութիւնը սարսափելի պայմանների մէջ է անցել։ Դա այն ժամանակն էր, երբ Թիւրքերը ամեն կերպ աշխատում էին [illegible] ընկճել։ Ցերեկով եմ մանաւանդ այն օրը, երբ Թիւրքերը անցան մեր գիւղով և մայրս ահ ու սարսափի մէջ էր ընկել, որ չը վերցնեն ինձ...

Դեռ պատանեկան հասակում ես պատմութիւններ էի լսում, թէ ինչպէս Թիւրքերը բռնաբարում են բուլղար կանանց, թէ ինչպէս արատաւորում են նրանց։ Նրանց զոհերից՝ արատաւորված աղջիկներից մեր գիւղում էլ շատ կային։

Մի անգամ ես աշխատում էի այգում, երբ յանկարծ նկատեցի, որ մի Թիւրք է մօտենում դէպի այգին, դէպի ինձ։ Օգնութեան կանչելը անմտութիւն կը լինէր, փախչելն էլ ուշ էր։ Թիւրքը սկսեց խօսել։

—Դու ջուր ես բաց թողնում այգին։

—Այո, եկ օգնիր, պատասխանեցի ես և երբ Թիւրքը կռացաւ, կացնի երկու հարուածով կտրեցի նրա գլուխը։ Դիակը թաղեցի աւազի մէջ։ Երկու օր ես լռեցի, այդ դէպքի մասին ոչ ոքի չը պատմեցի։ Միայն երրորդ օրը յայտնեցի կնոջին և բոլորս էլ վճռեցինք գաղտնի պահել այդ դէպքը։

Անցաւ ժամանակ։ Մեր դրութիւնը հետըզհետէ աւելի ու աւելի վատացաւ։ Մի անգամ եղբայրս գնաց քաղաք և այլ ևս չը վերադարձաւ։ Նրան սպանողը նոյն իսկ յայտնի չեղաւ։ Հայրս էլ մեռաւ. ուստի ես ստիպված էի ինքս աշխատել, ամեն ինչ կատարել...

Վերջապէս ես միացայ հրոսակախմբերին, սկզբում ծառայում էի նրանց, իսկ յետոյ իբրև զինակից ընկեր հետները միասին կռւում էի։ Բեռի Իլիայի հրոսակախմբի մէջն էի ես. առաջին անգամ 1895 թ. ընդհարում ունեցանք Թիւրքերի հետ։ Մենք 50 հոգի էինք, իսկ Թիւրքերը—2000, բայց այնուամենայնիւ յաղթութիւնը մեր կողմը մնաց։

Հէնց այդ ընդհարման ժամանակ ես ստացայ իմ առաջին վէրքը։ Թշնամու գնդակը դիպաւ իմ աջ թևին և դուրս եկաւ ձախ ծնօտի տակից ու դրանից յետոյ մենք շատ անգամ ընդհարումներ ունեցանք Թիւրքերի հետ, բայց մինչև վերջը ես անվնաս մնացի...

Վերջապէս իմ զինակից հրոսակներն ինձ գլխաւոր խմբապետ ընտրեցին։ Ծանր պարտականութիւն։ Ամենավերջին ընդհարումը Թիւրքերի հետ պատահեց Սօլունի ջրաղացներից մէկի մօտ։ Թշնամու բանակը բաղկացած էր մի քանի հարիւր բաշիբօզուկներից։ Նրանք կորցրին 38 սպանվածներ։ Բայց մեր դրութիւնն էլ վատ էր. պակասում էին փամփուշտներ, ուստի և ստիպված եղանք նորից վերադառնալ դէպի բուլղարական սահմանը...»։

—Արդեօք, տեղական բուլղար ժողովուրդը միշտ օգնում էր ձեզ, հարցնում է թղթակիցը։

—Այո, միշտ և ամեն տեղ։

—Իսկ հրոսակները, չէին տրտնջում, չէին գանգատվում դժուարութիւններից։

—Երբեք. Նրանք բոլորն էլ յօժարակամութեամբ ու համբերութեամբ տանում էին թէ քաղց, թէ ծարաւ, թէ վտանգ և թէ ծանրութիւն...

—Իսկ ինչպէս էին վերաբերվում դէպի ձեզ...

—Օ՜հ, նրանք բոլորն էլ յարգում էին ինձ և հնազանդվում. իմ խումբը բաղկացած էր 50 հոգուց, բայց նրանցից ոչ մէկը, ոչ մի օր չը հակառակվեց իմ հրամաններին... Այժմ ես այստեղ՝ Սոֆիայում վիրակապութիւն եմ սովորում, որպէս զի նորից գնամ Մակեդոնիա նորից կռւելու համար։ Միայն թէ փամփուշտներ լինէին...

Դրանով վերջացնում է բուլղար հերոսուհին իր ինքնակենսագրութիւնը, որ այնքան խրատական, այնքան նշանակալից է իր բովանդակութեամբ։

Իզուր չէ ասված, թէ հանգամանքները անձնազոհ մարդկանց հերոսացնում են։ Կատարինէ Արնաուտովայի անձնուրացութիւնը կենդանի վկայ է այդ ճշմարտութեան...

ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ

Սալմաստ, օգոստոսի 25-ին

Պարսից կառավարութիւնը մի ինչ որ անսովոր շարժման մէջ է երևում։ Մի ամիս կը լինի, որ Սալմաստի և Խոյի դատաւոր է նշանակված Մէջիդըլ Սալթանէ անունով մի կրթված, քաղաքագէտ անձն, որ Պարսկաստանում աչքի ընկնող անձանցից մէկն է։ Մէջիդըլ Սալթանէն քարեկիրթ, անկաշառ դատաւոր է, որի մօտ հաւասար իրաւունքով են օգտվում բոլոր ազգութեան և կրօնի պատկանող մարդիկ. դէպի հայերս առած աչքն ու յարգանքը աւելի են աչքի ընկնում, որովհետև նա տեսնում է, որ կրթական և առևտրական գործն աւելի հայերն են առաջ տանում, քան՝ այլ ազգութեան մարդիկ։

Մէջիդըլ Սալթանէն, բացի դատաւոր լինելուց, սահմանապահ զօրք՝ հրամանատար էլ է նշանակված։

Սալմաստից դէպի հարաւ սահմանագլխի մօտ մի քիւրդ հարուստ և ուժեղ չէյխ մի բերդ է սկսել շինել. պարսից կառավարութիւնը մի քանի անգամ պահանջել է չը շարունակել շինութիւնը, այլ քանդել. բայց քիւրդ չէյխը տեղեակ լինելով պարսից թուլութեան, ոչ մի ուշք չէ դարձրել մինչև այժմ, և հիմա էլ դեռ շարունակում է շինութիւնը։

Վերջերս բարձր իշխանութիւնից հրամայված է Մէջիդըլ Սալթանէին յարձակվել չէյխի վրա, քանդել բերդը և խոստ պատժել սահմանագլխի վրա գտնվող բոլոր քրդերին, որոնք կը յանդգնեն հակակառավարչական նշաններ ցոյց տալ։ Զօրքերի ընդհանուր հրամանատարը զինւորներ բերել տուեց Մարաղից, Սուլդուզից, Ղարադաղից և մի մեծ բանակ կազմած, թնդանօթներով և այլ պատերազմական պատրաստութիւններով գնաց չէյխի վրա։

Ինչպէս տեղեկանում ենք, մինչև այժմ ոչ մի կանոնաւոր ընդհարում տեղի չէ ունեցել. պարսիկները բերդից ոչ շատ հեռու բանակ են դրել և պատերազմական դրութեան մէջ են սպասում են, որ միայն մի անգամ հրացանաձգութիւն է տեղի ունեցել մի փոքրիկ խմբի վրա, որի ժամանակ սպանվել է մի պարսիկ զինւոր, վիրաւորվել են 5—6 այլ զինւորներ։

Ցարմար առիթից օգտվելով, Թիւրքաց կառավարութիւնն էլ դիմել է Պարսից կառավարութեան, թէ դուք ինչու համար էք ժողովվել սահմանի վրա. եթէ ցանկութիւն ունէք պատերազմելու, յայտնեցէք, եթէ ոչ հեռացվեցէք և յետ նահանջեցէք. Մէջիդըլ Սալթանէն, այդպիսի անորոշ դրութեան մէջ գտնվելով դեռ ոչ մի կտրական քայլ չէ անում, բայց շատ հաւանական է, որ ընդհարում տեղի ունենայ, մանաւանդ որ Թագաժառանգն էլ Թաւրիզից հեռագրել է Ջաֆար աղային (սահմանապահ Սալմաստ-Թիւրքիայի), որ ամբողջ պատրաստութեամբ Հին-Բաղաքում սպասի Սալմաստը Շէրիֆ բէյի յարձակումից ազատ պահելու համար։

Թիւրքիայի Սղերդի կողմերից մի քանի պանդուխտներ են եկել Սալմաստ։ Պատմում են, որ քրդերը մեծ խառնակութիւններ են առաջացրել այդ շրջանում, սպանութիւններին ու թալանին թիւ ու համար չը կայ...

Մուրակ

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—«Zeit» լրագրին հաղորդում են Միլանից, որ Միլանի «Pro Arménia et Macedonia» կոչված կոմիտէտը չէ դադարում հաւաքել նուիրատուութիւններ ի նպաստ թշուառ մակեդոնացիների։ Նա արդէն ուղարկել է 5000 ֆրանկ և ամեն տեղ կազմակերպում է ժողովներ և կօնֆերանսներ՝ ժողովարարութիւն անելու համար։ Կոմիտէտը դիմել է Պիոս X պապին այն յոյսով, որ նա չի հեռանի իր նախորդների Թիւրքաց քաղաքականութեան և չի հրաժարվի բարոյական միջնորդութիւնից ի նպաստ արևելեան քրիստոնեաների։

—Բուլղարական բոլոր գիմնազիաների ուսուցիչների համաժողովը, որ կայացաւ Սոֆիայում, սեպտեմբերի 9-ին, միաձայն կայացրեց որոշում՝ հաղորդել եղբայրական սրտագին ողջոյն մարտնչողներին, որոնք անկեղծ եռանդով և անօրինակ ինքնազոհութեամբ հերոսաբար կռւում են մարդկային ազատութեան և իրաւունքի համար։ «Ուսուցիչների համաժողովը ուղարկում է փառաւոր մարտնչողներին սքանչացման հարկ և ցանկանում է, որ արիւնալի էպօպէան աւարտվի ինքնավարութեամբ, որը միայն կարող է ապահովել այս թշուառ երկրի բնակիչների բարեկեցութիւնը և մտաւոր առաջադիմութիւնը»։

—Նորերս սուլթանը Թիւրք սպաներին ուղղեց մի ճառ, այդ ճառից և Թիւրքական նոր զօրագնդերի կազմութիւնից Բեռլինի լրագիրները եզրակացնում են, որ պատերազմ է սպասվում Բուլղարիայի և Թիւրքիայի մէջ։ Այդ լրագիրներին չէ զբաղեցնում այն հարցը, թէ ինչ կը լինի պատերազմի հետևանքը, այլ այն, թէ Ռուսաստանը կը մասնակցի այդ պատերազմին, թէ ոչ։ Բեռլինի լրագիրները, հաստատելով, որ Ռուսաստանում գոյութիւն ունի «մեծ պանսլաւական շարժում», ասում են, որ այդ շարժումը, անտեսելով զօրեղ հասարակական հոսանք, կը ստիպէ ռուսաց կառավարութեան, ինչպէս 1877-ին, միջամտել բուլղարների համար։ Սակայն, գերմանական մամուլի մեծագոյն մասը այն կարծիքն է յայտնում, որ ռուսները չեն միջամտի բուլղարների համար, խնայելով իրանց ֆինանսական և ժողովրդական ույժերը։

—«Times» լրագիրը, խօսելով Մանջուրիայի մասին, ասում է, որ Ռուսաստանը չունի այժմ ամենևին դիտաւորութիւն, ինչպէս և չէ ունեցել առաջ, դուրս գալ Մանջուրիայից։ Նա այժմ այնտեղ է և մտադիր է այնտեղ մնալ։ Ճիշդ է, նա խոստացել է դուրս գալ մի ամսից յետոյ Մուկդէնից, Նանհանգի գլխաւոր քաղաքից, բայց այդ չէ նշանակում, որ նա կը թողնէ Մանջուրիան. նա կը հեռանայ միայն և կը հաստատվի այն զօրանոցներում, որ կառուցել է սահմանագլխում, որտեղից դարձեալ կիշխէ Մանջուրիայի վրա։

—Հեռագիրը հաղորդեց, որ Պարսկաստանի մեծ վեզիր Աթաբէկը աքսորվեց պետութեան սահմաններից։ Աթաբէկի պաշտօնանկութիւնը և աքսորը, անկասկած, քաղաքական մեծ նշանակութիւն ունի, որովհետև նա ցոյց է տալիս, որ անգլիական քաղաքականութիւնը նորից սկսել է զօրեղանալ Պարսկաստանում։ Սակայն պէտք է ի նկատի ունենալ և այն, որ Աթաբէկը անձնական բազմաթիւ թշնամիներ ունէր և այդ թշնամիների պարագլուխ համարվում էր Շահի երկրորդ որդի Շօյա-Սալթանէն։ Հակառակորդների այդ կուսակցութիւնը արդէն մի քանի տարի է աշխատում էր պաշտօնանկ անել Աթաբէկին, բայց չէր յաջողվում։ Դեռ յայտնի չէ, թէ ով կը նշանակվի սադրազամ, բայց, անկասկած, Աթաբէկի հետ պաշտօնանկ կը լինեն և բոլոր այն մինիստրները, որոնք նրա կուսակիցներն էին, ինչպէս Մուշիր-Դովլէն՝ արտաքին գործերի մինիստրը։

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՑ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

4 սեպտեմբերի

ԼՈՆԴՈՆ։ Լրագիրները հաղորդում են, թէ կառավարութիւնը վճռել է Կ. Պօլսում առաջարկութիւն անել մակեդոնական կոտորածները դադարեցնելու վերաբերմամբ։

ՎԻԵՆՆԱ։ Լրագիրները հաղորդում են այն շրջաբերականի մանրամասնութիւնները, որով բուլղարական արտաքին գործերի մինիստրը դիմել էր իշխանութեան արտասահմանեան քաղաքական ներկայացուցիչներին։

Կ. ՊՈԼԻՍ։ Ըստ երևոյթին սուտ է այն տեղեկութիւնը, թէ Երուսաղէմի ռուսական վանքում անկարգութիւններ են կատարվել։

ՆԻԺՆԻ-ՆՈՎԳՈՐՈԴ։ Սեպտեմբերի 4-ին լոյս տեսաւ «Нижегородская Земская Газета»-ի առաջին համարը։

ՌՕՍՏՕՎ ԴՕՆԻ ՎՐԱ։ Հանդիսաւոր կերպով բացվեց կենդանապահական ցուցահանդէսը։

ՌԻՕ-ԴԷ ԺԱՆԷՅՐՕ։ Ժանտախտը, որ վերջին տարիներում երբէք չէր ընդհատվում այստեղ, նորից է յայտնվել աւելի ուժեղացած չափով։ Մահվան մի քանի դէպքեր են պատահել և մօտ 60 հոգի գտնվում են հիւանդանոցում։ Խիստ միջոցներ են ձեռք առնված։

ԿԱԶԱՆ։ Ներքին գործերի մինիստրը եկաւ սեպտեմբերի 4-ին և իջաւ պալատում։

ՍՕՖԻԱ։ Սեպտեմբերի 3-ին զէնքի են կանչված 6-րորդ ժամանակամիջոցի պահեստի զինւորները, շատ մեծ յաջողականութեամբ։ Հաւաստացնում են, որ զէնքի կոչվածների թիւը 8900-ից աւելի չէ։

Կ. ՊՕԼԻՍ։ Կայմանչալայի մօտ ապստամբները ոչնչացրել են 300 մարդ կանոնաւոր զօրքից։ Ստարօվինայի և Վիտօլիստայի միջև ապստամբները դարանի մէջ են քաշել երկու բատալիօն։

ՎԱՐՇԱՒԱ։ «Слово» լրագիրն հաղորդում է, թէ Թիւրքիայից և Սերբիայից յատուկ մարդիկ են գալու Վարշաւա՝ ձիեր գնելու համար չահագործ մարդիկ արդէն դիմել են ներքին նահանգները՝ հարկաւոր քանակութեամբ ձիեր ձեռք բերելու նպատակով։

Կ. ՊՕԼԻՍ։ Բ։ Դրան տեղեկութիւնների համեմատ բոլգարական Տիմուշ և Սեբէ Գիլիսէ գիւղերում հաւաքվել են մեծ քանակութեամբ ապստամբներ բոլգարական սահմանն անցնելու համար։ Նրանք Տիմուշում դինամիտով օդն են թռցրել Թիւրքական պօստային կայարանը և տրել են գիւղը։

ՍՕՖԻԱ։ Ցակովը իբրև քաղաքական գործակալ ուղևորվում է Լօնդօն։ Բ. Դուրը բողոքեց Ֆիշեվին Կ. Պօլսի քաղաքական գործակալ նշանակելու դէմ։

Կ. ՊՕԼԻՍ։ Օգոստոսի 25-ին և 28-ին Մօնաստիրի վիլայէթում և Սալօնիկում ընդհարումներ են տեղի ունեցել։ Սպանված են շատ ապստամբներ, որոնց թւում հրոսակների առաջնորդներ Գեաչովը և Կոցօրովը։ Զելենկով կոչված տեղում ռումբեր են գտնված, որոնք նշանակված էին գնացքները խորտակելու համար։

ՍԱԼՕՆԻԿ։ Ապստամբական մի ուժեղ հրոսակախումբ քաշվեց Գերիմեան լեռները և ենթարկվեց Թիւրքական զօրքերի յարձակմանը։ Ապստամբները սպանված թողին 48 հոգի, որոնց թւում 3 խմբապետներ և շատ ռազմամթերքներ։ Զօրքերը կորցրին 7 սպանվածներ և նոյնքան վիրաւորներ։

5 սեպտեմբերի

ՍՕՖԻԱ։ Բոլգարական կառավարութիւնը զէնքի կանչեց երեք դիվիզիաներ։

ԲԷԼԳՐԱԴ։ Գեօրգ Միշիչ, որի դէմ գլխաւորապէս ուղղված էին անբաւական օֆիցէրների յարձակումները, նշանակված է զինուորական ճեմարանի պրոֆէսօր։

ՄԱՐՍԷԼ։ Ուղղիչ ռատիկանութեան դատարանը այսօր վեց և երեք ամսեայ բանտարկութեան դատապարտեց Գիկոլօին և Դախինօին, որոնք յուլիսի 27-ին տօմառներով յարձակում գործեցին Կոմբի կառքի վրա։

ՄԱԴՐԻԴ։ Մամուլի մերկացումներն այն հետևանքն ունեցան, որ Մադրիդի ռատիկանութեան գլխաւորն ու բոլոր պաշտօնեաներն պաշտօնանկ են արված։ Նրանց մեծ մասը, իբր թէ օգնել են սոցիալիստներին։ Նրանցից շատերը առաջ բանտարկված են եղել։

Կ. ՊՕԼԻՍ։ Բոլգարիայում կազմակերպվում են նոր հրոսակախմբեր։ Մօտ 4,000 մակեդոնացիներ են հաւաքվել Կիւստենդիլի և Դուբնիցայի մօտ։ Սարուսնեցկայի հովտի կիրճում տաք կռիւներ են տեղի ունենում հրոսակախմբերի և զօրքերի հետ։ Հրոսակախմբերը ցնցվի հրամանատարութեան տակ են։

ԼՕՆԴՕՆ։ Սեպտեմբերի 4-ին, երեկոյեան ժամը 11-ին, թագաւորն ընդունեց Զեմբերլէնի, Լիտչի և Գամիլտօնի հրաժարականը։ Զեմբերլէնի կարծիքով Բալֆուրը բաւականաչափ հաստատակամ չէ, ուստի և նա դերադասում է հեռանալը։ Նա համոզված է, որ մի որոշ ժամանակից յետոյ նա կարողանալու է համոզել անգլիական ազգին յօգուտ իր գաղափարների։

ԹԻՖԼԻՍ։ Սագրազամը հրաժարական տուեց։ Գործերի կառավարութիւնը յանձնված է հինգ մինիստրներին։ Երկիրը խաղաղ է։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ԳԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԽՍԱՀԱԿ ՄԷԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԳՈՒՏՏԷՆԲԷՐԳ

դրախանութում վաճառվում են հետեւեալ նոր հրատարակութիւնները.

«Կեանքի ծովերի խորքում», Վ. Լունկեվիչի, թարգմ. Սա. Մալխասեանի, 50 պատկերով, գինն է 30 կ.

«Գեղարուեստական ալբօմ, հատոր բ. Մարիմ-Գնունիի (10 պատկեր) 1 ր. 50 կ.

«Մակար Զուդրա», Մ. Գօրկիի, թարգմ. Ս. Բաբեան 10 կ.

«Տրիլբի», դրամա 4 արար. թարգմ. Լ. Մէլիք-Ադամեանց, գինն է 25 կ.

Դիմել՝ Книжный магазинъ „Гуттенбергъ" (Дворцовая), Г. Галустяну. 3—3

ՀԱՆՐԱՄԱՏԱՉԵԼԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ
Թիֆլիսի Հակա-ալկոհոլական ընկերութեան Հաւլաբարի բաժանմունքի
Ն. ՄՈՒՐԱՇԿՈՅԻ ԹԱՏՐՈՆՈՒՄ
Շաբաթ, սեպտեմբերի 6-ին
Հայ թատերասէրները, բարեհաճ մասնակցութեամբ դերասան Միրզոյեանի
Կը ներկայացնեն
I
ՔԱՆԴԱԾ ՕՁԱԽ
Կոմեդիա 3 գործ. հեղ. Գ. Սունդուկեանցի։
II
ԽՕԼԵՐ
Վոդեվիլ 1 գործ. հեղ. Յար. Թումանեանի։
Մասնակցում են տ. Նոնիկեան, օր. օր. Աստղիկ, Հայկուհի, Վարսենիկ, պ.պ. Բաբայեան, Գրիգորեան, Գուլազեան, Լաչքարեան, Միրզոյեան, Սարեան, Փիրումեան և ուրիշները։
Խաղամիջոցներին կը նուագէ աշուղ-Հազիրի խումբը։
Սկիզբն է 8 ժամին երեկոյեան։
Տեղերի գինը 5-ից մինչև 75 կոպէկ։ 1—1

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՑԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ
օրանով յայտարարում է, որ նրա դիւանատան մէջ 1906 թ-ի սեպտեմբերի 12-ին նշանակված է աճուրդ՝ կապալով տալու Քուռ գետի վրա բանող պարսմը Մուխրանակայա փողոցի և Գեսկիի մէջ։ Անդրին մասնակցել ցանկացողները կարող են կարդալ պայմանագիրը Ուպրավայի 4-րդ բաժանմունքում բոլոր լի օրերը, ժամի 9-ից մինչև 3-ը։ Փակ ծրարներ ընդունվում են մինչև աճուրդի սկիզբը։ Նախօրօք պէտք է ներկայացնել 1500 րուբլի գրաւական։ 1—2

ՄԻ ՀԱՅ ՕՐԻՈՐԴ
որ գիտէ հայերէն մաքուր խօսել՝ ցանկանում է պաշտօն ունենալ ընտանիքի մէջ երեխաների հետ խօսելու։
Դիմել Տ. Բաղադրեանցին, Անտոնեան փող., № 23։ 1—6

ՅՈՎՀ. ԱՐԱԲԱՋՅԱՆ
ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՈՒ
Առաջին տարի . . 25 կ.
Երկրորդ տարի . . 30 կ.
Երրորդ տարի . . 40 կ.
Դիմել՝ Александрополь. Учителю Ованнесу Арабаджіанцъ. 1—5

ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ
Պատրաստ են տպագրութեան համար. «Ալի Մէլիք և Սանասար», «Գօտիկ Մհեր», «Ռոստամ և Սալման» (2-րդ տպ.) «Աղուծանե Մհեր» (2-րդ տպ.) և «Ոբրիկնարի արցունքները»։ Որովհետև արտասահման եմ գնալու և փողի կարիք ունեմ, պատրաստ եմ ցանկացողներին յանձնել այդ վեց աշխատութիւնների հրատարակութեան իրաւունքը 300 րուբլի կանխավճարով՝ մի տարի պայմանաժամով։
Դիմել՝ Тифлисъ, Алексѣевская ул., № 5, Бр. Акоповымъ. Յանձնել Գրիգոր Բալասեանցին։ 1—2

Լոյս տեսաւ
ՅՈՎՀ. ԴՈՒՐԲԱԽԵԱՆԻ
„ԾԱՆՕԹ ՊԱՏԿԵՐՆԵՐ"
վերնագրով վիպական գրուածքը—հայ եկեղեցականների և երէցփոխների կեանքից։
Գինը 75 կ ապ։
Դիմել՝ հայ գրավաճառներին Թիֆլիս և Բաքու. իսկ հեղինակին—հետեւեալ հասցէով. С.-Петербургъ, Лештуковъ переул. № 4. Пушкинская Скоропечатня. 4—10

ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ ԵՒ ՊԱՆՍԻՕՆ
Մ. Ա. ԲԱՐՏՕԼԴԻ
Ելիզաւետինսկայա փող. սեփական տուն № 79
Ընդունվում են երեխաներ միջնակարգ դպրոցների համար պատրաստելու։ Տեսական և գործնական պարապմունքներ։ Ֆրանսերէնի, գերմաներէնի և անգլիերէնի դասընթացներ։ 4—5

ԿԱՐ ՈՒ ՁԵՒԻ ԴՊՐՈՑ
Ն. Գ. ՇԱՀՈՒՄԵԱՆԻ
Աշակերտուհիների ընդունելութիւնը ամենայն օր։ Հասցէն՝ Սօլոլակ, Бебутовская ул., № 64. д. Теръ-Осипова. 3—4

ԸՆԴՈՐՁԱԿ ՔԱՐԵԱՅ ՁՈՐ ԱՄՐԱՐ
քաղաքի կենտրոնում, ուր այժմ գտնվում է «Надежда» ընկերութեան պահեստը, տրվում է վարձով 1904 թ-ական մայիսի 1-ից՝ տպրանքներ պահելու համար։ Ամբարի յատակի տարածութիւնն է 160 քառ. սաժէն։ Ըստ ցանկութեան կարելի է տալ և մաս-մաս՝ ուրիշ պէտքերի համար։ Կաթոլիկական փողոց, տ. Զուբալովի, № 5, հարցնել տանտիրոջը։ Մուտքը փոքր փողոցից. զանգահարել գլխաւոր դռնից, առաւօտեան 9—1 ժամին և երեկոյեան 5—7 ժամին։
(չ.) 1—3

ТОРГОВЫЙ ДОМЪ ЛЕОПОЛЬДЪ НЕЙШЕЛЛЕРЪ
извѣщаетъ, что съ 1-го сентября открывается имъ на Эриванской площади, въ домѣ Городскаго Кредитнаго Общества,
ОПТОВЫЙ СКЛАДЪ
РЕЗИНОВЫХЪ ГАЛОШЪ
Т—ва Россійско-Американской Резиновой Мануфактуры
И ПРОДАЖА КОЖЕВЕННЫХЪ ТОВАРОВЪ
русскаго и заграничнаго производства.
(31 о. 2, 4, 6, 7 о.) 4—5

ԼՈՅՍ ՏԵՍԱԻ
2-րդ տպագրութեամբ
Կ. ԿՈՒՍԻԿԵԱՆՑԻ և ԼԵՒՈՆ ՍԱՐԳՍԵԱՆՑԻ
Կազմած
ՄԱՅՐԵՆԻ ԹՕԱՔ
Ընթերցանութեան ձեռնարկ 3-րդ և 4-րդ տարիների համառօտ հայերէն-ռուսերէն բառգրքով։
ԳԻՆՆ Է 70 ԿՕՊ.
Դիմել. Թիֆլիս՝ «Մուրճի» խմբագրատուն կամ «Գուտտենբերգ» և «Կենտրոնական» գրավաճառանոցներին։ 4—10

ՄԱՆԿԱԿԱՆ ՊԱՐՏԷԶ ԵՒ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ
Ե. ՑԱՐՈՒԹԻՒՆԵԱՆԻ
(Մննդ. Յովհաննէսեան)
Բերութովսկայա փողոց, № 38.
Ընդունվում են երկու սեռի մանուկներ և պատրաստվում միջնակարգ դպրոցների համար։ Ընդունելութիւնը օգոստոսի 22-ից, ուսումը սեպտեմբերի 1-ից։
Մանկական պարէզի պարապմունքները սեպտեմբերի 10-ից Գեսերբուրգի Ֆրեօբելեան կուրսերն ուսարտած վարժուհու ղեկավարութեամբ։
(օգ. 22, 24, 26, 28, 31-ին, սեպ. 1, 2, 4 5 և 7-ին) 9—10

ՕԳՏՎԵՑԷՔ ԴԷՊՔԻ!!!
Վ. եւ Ա. ԽՈՒԴԱՎԵՐԴԵԱՆՆԵՐԻ
ՀԱԳՈՒՍՏՆԵՐԻ ԽԱՆՈՒԹՈՒՄ,
որը գտնվում է Գոլովինսկի պրոսպէկտի վրա, առաջին գիմնազիօնի հանդէպ՝ նշանակված է
ՄԻՄԻԱՅՆ 15 ՕՐՈՎ
ՁԸ ՏԵՍՆՎԱԾ ՄԵԾ ՎԱՃԱՌՈՒՄՆ։
Մախու տրված են՝ ձմեռային և ամառային սեզոններից մնացած՝ աղամարդկանց, կանանց և երեխաների բոլոր ՊԱՏՐԱՍՏԻ ՀԱԳՈՒՍՏՆԵՐԸ, որոնք անպատմելի կերպով պակասեցրած են իսկականից—30%-ից մինչև 50%։
ՕԳՏՎԵՑԷՔ ԴԷՊՔԻ!!!
Անպայման առանց ստակարկութեան։ 13—15

Ս.-Պետերբուրգի „ՆԱԴԷԺԴԱ" Ընկերութեան
Վարչութիւնը օրանով յայտարարում է, որ նա ապրանքներ փոխադրելու և ապահովագրական գործողութիւնների համար բաց է արել գրասենեակներ Պարսկաստանի հետեւեալ քաղաքներում.
1) Աստարա, 2) Արդաբիլ, 3) Թավրիզ, 4) Մարաղա, 5) Սաուջբուլաղ, 6) Ուրմիա, 7) Սալմաստ, 8) Խոյ, 9) Պարսից Զուլֆա, 10) Շախտախտի, 11) Էնզէլի, 12) Պիր Բազար, 13) Ռէշտ, 14) Կազվին, 15) Թէհրան, 16) Կում, 17) Կաշան, 18) Իսֆահան, 19) Համադան, 20) Կիրման, 21) Եզդ, 22) Մէշէդիսէր, 23) Սարի, 24) Բարֆէրուշ, 25) Ամոլ, 26) Բէնդէր-Գազ, 27) Աստրաբադ, 28) Բասրա, 29) Շախրուդ, 30) Սաբզէվար, 31) Միան-Աբադ, 32) Բուժնուրդ, 33) Շիրվան, 34) Կոչան, 35) Մամէդ-Աբադ (Դէրէգեզում), 36) Արաքկ, 37) Մէշէդ, 38) Նէշաբուր, 39) Թուրբէթ-է-Խէյդարի, 40) Թուրշիզ, 41) Խաֆ, 42) Թուն, 43) Գային, 44) Բիրջան, 45) Նուարէթ-Աբադ (Սէիստանում)։ 6—10

Ֆինանսների մինիստրութիւնից հաստատված
ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ
երկու սեռի աճձաց համար
[*Баку, Прачешная, домъ Теръ-Ованесова*]
Կուրսերի նպատակն է տալ ունկնդիրներին մասնագիտական-առեւտրական կրթութիւն եւ պատրաստել հմուտ հաշուապահներ։ Աւարտողները ստանում են աստիճաններ։
Կուրսերում ուսանվում են՝ 1) Առևտրական թւաբանութիւն և թւաբանութիւն համրիչի վրա. 2) Հաշուապահութիւն՝ առևտրական, արդիւնաբերական-գործարանական և բանկային. 3) Առևտրական թղթակցութիւն. 4) Առևտրական ոնտեսագիտութիւն. 5) Առևտրական և մուրհակային օրէնքներ. 6) Գեղագրութիւն և տրագրութիւն (ուղղումն ձեռագրի). 7) Ուսուցումն գրող մեքենայի վրա։
Ուսումը սկսվելու է սեպտեմբերի 20-ից։ Ընդունելութիւնը սեպտեմբերի 1-ից ամենայն օր, կուրսերում առաւօտեան ժամը 9-ից մինչև 12-ը և երեկոյեան 4-ից մինչև 7 ժամը։ Կուրսերի կանոնադրութիւնը (уставъ) և մանրամասն ծրագիրը (программа)—տրվում և ուղարկվում են ձրիաբար։ Օտարաքաղաքացիները դիմում են՝ Баку, Учредителю Коммерческихъ Курсовъ А. И. Теръ-Каспарову. (Ե. չ.) 16—25

Дозволено Цензурою. Тифлисъ, 4 Сентября 1903 г.
Электропечатня Груз. Изд. Т—ва, Б. Ванкская ул.